Արձանագրություն N 3

«ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցումով Աբովյան համայնքի կարիքների համար գիշերային լուսավորության էներգախնայող լուսատուներ ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների նիստի

ք.Աբովյան 13/07/2018թ.

ժամը 10:30

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ Լ. Շառաջյանը (ԳՊ/ԲԱ), Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Ջ. Սարգսյանը (ԳՊ/ԳԱ), Կ. Վարդանյանը (ԳՊ/ԳԱ),

Քարտուղար՝ Ս.Աղաջանյանը (ԳՊ/ՄՀմ)

1. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ

1.1 ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի դրական եզրակացության համաձայն ներկայացված տվյալները համապատասխանել են իրականությանը:

1.2 «Ռոմիկ Ասատրյան» ԱՁ -ի ներկայացված որակավորման փաստաթղթերը բավարարում են հրավերի պահանջներին, սակայն հավելված 6.1-ով «Ռոմիկ Ասատրյան» ԱՁ-ն ներկայացրել է ապրանքի նկարագիր, որն ամբողջությամբ համընկնում է հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրի հետ: Միևնույն ժամանակ ներկայացրել է իր կողմից մատակարարվելիք ապրանքի տեխնիկական անձնագիրը, որում ներառված տեխնիկական բնութագիրը չի համընկնում իր՝ հավելված 6.1-ով հայտարարված նկարագրին: Վերջինս համարժեք չէ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով ապրանքին:

Ընդունվել է որոշում, կողմ՝ 5, դեմ 0:

2. Հանձնաժողովի կայացրած որոշման մասին

<u>Մ. Գուլոյան</u>

Հանձնաժողովը որոշեց.

2.1 Մերժել «Ռոմիկ Ասատրյան» ԱՁ –ի հայտը՝ մատակարարվելիք ապրանքի տեխնիկական բնութագրի անհամապատասխանության և ոչ համարժեքության հիմքով պայմանավորված:

2.2 Ծանուցել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման պահանջները ապահովող փաստաթղթերը՝ հավելվածներ 6-ը և 6.1-ը:

2.3 Ներկայացնել հարցում ՀՀ ԿԱ ՊԵԿ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ժամկետանց պարտավորությունների, վերջին երեք տարվա շրջանառության, ակտիվների և պարտավորությունների մասին եզրակացություն ստանալու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում, կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Գուլոյան

անդամներ՝ Ջ. Սարգսյան

Կ.Վարդանյան

Լ. Շառաջյան

Գ. Խաչատրյան

Քարտուղար՝ Ս. Աղաջանյան